Ամփոփ նյութ

«ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
01/03/2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/07ԾՕՀ-Ա
«ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՍՊԸ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումները թույլ տալու համար Կազմակերպության նկատմամբ կիրառել տուգանք՝ 3000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով և նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու և նման խախտումները կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կազմակերպություն մուտքագրվելու կամ Կազմակերպության լիազորված անձին սահմանված կարգով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել երկամսյա ժամկետում՝ ՀՀ վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**